

Պիտոբյանն սաղանդավոր կազմակերպիչը

Ակադեմիկոս Էմիլ Միրզաբեկյանի ծննդյան 80-ամյակի առթիվ

2002 թվականի դեկտեմբերին լրացավ 33 ԳԱԱ ակադեմիկոս, Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի հիմնադիր Էմիլ Գայկի Միրզաբեկյանի ծննդյան 80 տարին:

Է. Միրզաբեկյանը ծնվել է 1922 թ. Երեւանում, մսավորականի ընտանիքում: Նրա ծնողները՝ Գայկ եւ Անահիտ Միրզաբեկյանները, բժշկական գիտությունների դոկտոր դոկտորներ էին, բժշկական ինստիտուտի երկարամյա աշխատակիցներ:

Է. Միրզաբեկյանը 1940 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը եւ 18 տարեկանում գորակոչվել սովետական բանակ: 1942 թ. նա իր դիմումի համաձայն ուղարկվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարան, իսկ նույն թվի դեկտեմբերին լեյտենանտի կոչումով գործուղվել գործող բանակ: Մինչեւ Գայրենական մեծ Պատերազմի ավարտը նա գործող բանակում էր, երկու անգամ վիրավորվել է, Պարզեասրվել շահագանգներով եւ մեղադրվել:

Պատերազմից վերադառնալուց հետո Է. Միրզաբեկյանը ընդունվում է Երեւանի Պետական համալսարան եւ 1950 թ. ավարտում մայր բուհի ֆիզիկայի բաժինը: ԵՊՀ-ն ավարտելուց հետո երիտասարդ ֆիզիկոսն ընդունվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտի նոտասակային աստիճանադաս: Նրա գիտական ղեկավարն էր ակադեմիկոս ֆիզիկոս, սովետական ռադիոաստղագիտության հիմնադիր Ս. Խայկինը:

Միության հռչակավոր գիտական կենտրոնում է. Միրզաբեկյանի հայտնվելը Պատահական չէր: 33 ԳԱ Պրեզիդենտ Վիկտոր Գամբարձումյանը գիտեր, որ առանց երիտասարդ սաղանդավոր մասնագետների հնարավոր չէր լինի Գայրենական առաջ քանել բուռն զարգացում ապրող «ռադիոֆիզիկա» եւ «ռադիոաստղագիտություն» նոր գիտական ուղղությունները: Այդ տարիներին արդեն ծեղ էին բերվել բավականին մեծ հաջողություններ արեգակի եւ Տիեզերական դիսկրետ աղբյուրների ռադիոճառագայթման ուսումնասիրությունների ուղղությամբ, գլխավորապես մեծահասակ ալիքների սիրույթում: Ռադիոաստղագիտության զարգացումը Պատահանում էր ուսումնասիրություններ կատարել ավելի կարճ ալիքների սիրույթում: Դրանք Պայմանավորված էին հետաքրքիր ֆիզիկական երեւոյթներով, որոնք դրսեւորվում էին ալիքների երկարության այդ սիրույթում: Այդօրինակ խնդիրների շարքում մեծ հետաքրքրություն էին ներկայացնում Տիեզերական աղբյուրների ռադիոճառագայթման բեւեռացման աստիճանի եւ մեխանիզմի Պարզաբանման հարցերը: Է. Միրզաբեկյանի առջեւ խնդիր դրվեց ստեղծել 3 սմ ալիքի երկարության սիրույթում մեծ զգայունության ընդունիչ համակարգ, որի օգնությամբ ուսումնասիրվի Արեգակի եւ այլ աղբյուրների բեւեռացված ռադիոճառագայթումը, որոշվեն նրա ինտենսիվությունը եւ բնութագրերը: Է. Միրզաբեկյանն այդ բարդ խնդիրը կատարեց փայլուն կերպով: Միաժամանակ նրա կողմից լուծվեցին մի շարք խնդիրներ, որոնք հետագայում հիմք դարձան մի մեծ գիտական ուղղության, որը ծեւավորվեց որպէս «բեւեռացված ճառագայթման վերլուծումը եւ նրա կիրառությունները գերբարձր հաճախությունների (ԳԲՀ) սիրույթում»: Այդ աշխատանքները շարունակվեցին Բյուրականի աստղադիտարանում եւ դրանցով հիմք դրվեց ռադիոֆիզիկայի զարգացմանը Գայրենականում: Դրանք կազմեցին գիտության այդ բնագավառի զարգացման առաջին փուլը, երբ որոշվում էին նրա զարգացման կարեւոր ուղղությունները: Հետագայում այդ ուղղությունները ինտենսիվ զարգացան Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում, որը Է. Միրզաբեկյանը ղեկավարեց նրա հիմնադրման օրվանից մինչեւ իր կյանքի վերջը:

Է. Միրզաբեկյանի ղեկավարությամբ ինստիտուտում զարգանում են ռադիոֆիզիկայի կարեւոր ուղղությունները՝ ԳԲՀ ռադիոֆիզիկական, վանսային ռադիոֆիզիկական, էլեկտրոնային կառավարման համակարգերը, կիսահաղորդչային էլեկտրոնիկան եւ այլն: Այս ուղղություններով Է. Միրզաբեկյանի եւ նրա աշակերտների կողմից ստացվել են կարեւոր գիտատեսական արդյունքներ, որոնք հայտնի են համաշխարհային գիտական հասարակայնությանը: Առանձին հիշատակման են արժանի գերգ-

րոնային կառավարման համակարգերը, կիսահաղորդչային էլեկտրոնիկան եւ այլն: Այս ուղղություններով Է. Միրզաբեկյանի եւ նրա աշակերտների կողմից ստացվել են կարեւոր գիտատեսական արդյունքներ, որոնք հայտնի են համաշխարհային գիտական հասարակայնությանը: Առանձին հիշատակման են արժանի գերգ-



գայուն ընդունիչ համակարգերի ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքները: Այդ համակարգերը լայնորեն ներդրվեցին հեռավոր Տիեզերական կառույց, երկրի բնական Պատերազմների ուսումնասիրություններում եւ այլ բնագավառներում:

Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում սարվող գիտական ուսումնասիրություններին բնորոշ էր այն, որ մեկուսումների մեծ մասը ավարտվում էին որոշակի գիտատեսական արդյունքով, որը հնարավոր էր ներդրել մեծապես զարգացող ժողովրդին: Դա չէր նշանակում, որ Միրզաբեկյանը էական դեր չէր վերադասում հիմնարար հետազոտություններին. նա կարեւորում էր դրանց ներդաշնակ զարգացումը: Այդ սկզբունքը գիտական գիտակազմակերպչական գործունեության ընթացքում նրան բերեց բարձր հեղինակություն գիտատեսական հասարակության շրջանակներում:

Է. Միրզաբեկյանը 1971 թ. ընտրվում է 33 ԳԱԱ քրթակից անդամ, իսկ 1974 թ.՝ իսկական անդամ: 1974-76 թթ. նա Գայրենական գիտությունների ակադեմիայի ֆիզիկատեսական գիտությունների եւ մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս Կատարել էր, իսկ 1976 թ., մինչեւ իր անժամանակ մահը՝ 1980 թ., ԳԱԱ փոխորդանից:

Է. Միրզաբեկյանը մեծ նշանակություն էր տալիս երիտասարդ կարգերի Պատերազման գործին ինչպէս Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում, այնպէս էլ Երեւանի Պետական համալսարանում, որտեղ նա մանկավարժական գործունեություն էր ծավալում: Նրա անմիջական խաձեռնությամբ համալսարանում հիմնադրվել է ռադիոֆիզիկայի ֆակուլտետը:

Է. Միրզաբեկյանին բնորոշ էր Կազմակերպչական Պատերազմ բարձր գիտակցումը իր ժողովրդի, հայրենիքի եւ բոլոր այն գործերի հանդեպ, որ նա խաձեռնում էր ինքը: Ներքին մի հմայնով, ընդհանուր գործին նվիրվածությամբ նա իր շուրջն էր համախմբում աշխատակիցներին եւ բոլոր նրանց, ում հետ առնչվում էր, ովքեր գիտեին նրան: Նա Պատերազմ էր իր եւ իր համախոհների, գործընկերների նկատմամբ, միաժամանակ բարյացակամ էր եւ հոգասար: Պրոցեսում էր, համբերասար, բայց եւ ժամանակ առ ժամանակ բռնկվող:

Է. Միրզաբեկյանի աշակերտները, Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի կոլեկտիվը վառ են Պատերազմում հմուտ ղեկավարի ու կազմակերպչի հիշատակը՝ Պատերազմում նրա հիմնադրած գիտական հետազոտությունների բարձր մակարդակը:

ՓԱԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

«Ճ ԳԱԱ Պրեզիդենտ, ակադեմիկոս

ՌԱԳԻՎ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՊՀ ընկեր, ակադեմիկոս